ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գեղարքունիքի մարզ
գ. Բերդկունք
էլ. փոստ berdkunq.gegharquniq@mta.gov.am

ՔԱՂՎԱԾՔ ՈՐՈՇՈՒՄԻՑ

«18» հունվարի 2017 թվականի թիվ 4

2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ,ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ, 19-րդ և 20-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի`4-րդ և 5-րդ , 11-րդ հոդվածի կետերը և 12-րդ հոդվածի 1-ին կետի ա/,գ/ ենթակետի,3-րդ,6-րդ,12-րդ կետի բ/ ենթակետի պահանջները`համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Բերդկունք համայնքի 2017թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը.
1.1/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի,շինությունների(ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար `
ա/ մինչև 300ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200ք/մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար`տասնհինգ հազար ՀՀ դրամ:
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար
գ/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար ՀՀ դրամ
դ/ 20 և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար ՀՀ դրամ
1.2/ Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական`այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 ՀՀ դրամ

1.3 Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար,օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար ՀՀ դրամ

1.4 Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար(մասնակիցների վճար) տեղական վճարը սահմանվում է 1000 ՀՀ դրամ:

1.5 Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը վարձակալության տրամադրելու դեպքում օրացուցային տարվա համար մեկ հեկտար վարելահողի համար տեղական տուրք սահմանել յոթ հազար չորս հարյուր դրամ և մեկ հեկտար արոտի վարձ՝ երկու հազար դրամ:

2. Սույն որոշում ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ԴԱԴԻԿՅԱՆ